Երկրորդ, նկատի ունենալով, որ Հայաստանի բարեբեր հողերը միայն Արարատեան դաշտին մէջ կը գտնուին, սխալ պիտի ըլլար այս վայրը օգտագործել ցորենի ցանքի համար (հոն պէտք էր ցանել աւելի բարեբեր պայմաններ պահանջող բանջարեղէնի տեսակներ): Եւ որովհետեւ ցորենի համար անհրաժեշտ են ընդարձակ տարածութիւններ, ընտրեցինք կիսալեռնային այն շրջանները, որոնք որեւէ ձեւով չէին օգտագործուել, գիտակցելով, որ ցորեն ցանելը ինքնին եկամտաւոր մեծ աղբիւր է, թէ եւ ժամանակի խնայողութիւն կ'ընձեռէ: Փորձի համար ցանուած ցորենի տեսակներէն ի վերջոյ ընտրեցինք 7 տեսակ: 1994ի Օգոստոսին Ամերիկայի պետութիւնը՝ Տագար մեթրական թոն սերմացու տրամադրեց «էյ. Թի. Ճի.»ին, որպէսզի զայն ձրի բաժնէ հայ գիւղացիներուն: Հայաստանի տարբեր շրջաններուն մէջ 5024 ընտանիք սերմացու ստացաւ: Յաջորդ տարի յաջողեցանք պարտաւարացուցիչ տրամադրել անոնց մէկ երրորդին: Այն մշակները, որոնք հետեւեցան մեր ցուցմունքներուն, բաւական բարձրորակ արդիւնք ստացան: 1995էն ետք մտածեցինք, թէ ամէն տարի սերմացուն արտասահմանէն Հայաստան ուղարկելու մեծածախս աշխատանքին փոխարէն՝ կարելի էր Հայաստանի մէջ բարձրորակ սերմացու ստանալ: Հետեւաբար ձեռնարկեցինք ցորեն բազմացնելու ծրագիրին, որ մեծ արդիւնք տուաւ:

Հ. - Ի՞նչ ձեւով տեղի կ'ունենայ աշխատանքի բաժանումը եւ երկրագործական գիտելիքներու փոխանցումը:

Պ. - Այս աշխատանքին մէջ կը ներառուին ոչ թէ պետական ներկայացուցիչներ, այլ անհատներ, որոնք գուտ քննակալ եւ ոչ առեւտրական մօտեցում կը ցուցաբերեն: Նկատի ունենալով, որ ամերիկեան ցորենի տեսակները պէտք է տարբեր ձեւով մշակուին՝ բաղադրած Հայաստանի եւ նախկին խորհրդային շրջաններուն մէջ մշակուած տեսակներուն, պայմանագիր կը կնքուի այն անհատ գիւղացիներուն հետ, որոնք կը յօժարին հետեւել մեր ցուցմունքներուն: Անոնք, որոնք որոշ ժամանակ մը ետք կը շեղին, դուրս կը մնան եւ կ'ընտրենք նորերը: Կը շարունակենք գործակցիլ այն հողատէրերուն հետ, որոնք պատրաստ են յօժար են հետեւելու մեր կողմէ տրամադրուած հողի պատրաստութեան եւ ցանքի ժամանակացուին:

Իսկ ի՞նչ գիտելիք է, որ կը փոխանցենք այստեղ: Հարկ է նշել շատ կարեւոր կէտ մը. Քալիֆորնիայի տնտեսական մարզը լաւագոյնն է,

մանաւանդ երբ զայն կը բաղադրեն նախկին խորհրդային համակարգին հետ: Երկու պարագաներուն ալ գոյութիւն ունի ուսումնասիրական գիտութիւն (ոխարըլ սայրըս). այսինքն գիտնականը կարելի լաւագոյն միջոցներու կիրարկումով կը յանգի որոշ եզրակացութիւններու: Սակայն տարբերութիւնը այն էր, որ նախկին խորհրդային գիտնականը իբրեւ մասնագէտ ինքն էր տէր իր գիտութեան եւ զայն չէր փոխանցեր ուրիշին, բոլորը կախեալ պահելով իրմէ: Իսկ Քալիֆորնիայի մէջ գիտնականներ կը բաժնէին իրենց գիտելիքները: Այլ խօսքով՝ հիմնական տարբերութիւնը կիրառական գիտութիւնն էր (ը փլալտ սայրըս): Ամերիկացի գիտնականը համալսարաններու մէջ իր յայտնաբերած գիտելիքները կը փորձարկէր ուղղակի հողին վրայ, ապա իր փորձառութիւնը «տարածուող սպասարկութեան» (էքսթենշըն սըրվիս) միջոցով կը փոխանցէր մշակներուն: Հայաստանի մէջ հողերու սեփականաւորներուն ետք գոյութիւն ունէր գիւղացիներու նոր խաւ մը, որ հող ունէր, սակայն զայն մշակելու գիտելիքը կամ միջոցը չունէր: «էյ. Թի. Ճի.»ն Հայաստան հրաւիրեց ամերիկացի չորս մասնագէտներ, որպէսզի գիտաժողովներու միջոցով իրենց գիտելիքները ծանօթացնեն Հայաստանի տարբեր շրջաններուն մէջ:

Այս գիտելիքներուն մաս կը կազմէին հողը պատրաստելու, մշակելու, ցանելու եւ հնձելու ձեւերը, ինչպէս նաեւ՝ ցանքի քանակն ու որակը պահպանելու միջոցները: Օրինակ, երբ Ամերիկայի մէջ վարելահող կը պատրաստեն, կը տեսնենք համահասարակ տարածութիւն մը: Իսկ Հայաստանի մէջ, հոն ուր հողը խորտուրտ էր, այդպէս կը մնար: Հետեւաբար Ֆրեդուէյն հողը հարթող գործիք մը տարինք Հայաստան, ուր նոյնատիպ 26 գործիքներ չիւնել տուինք եւ ձրի տրամադրեցինք գիւղացիներուն, որպէսզի զանոնք օգտագործէին մեր ցուցմունքներուն համահայն: Հարկ հողի վրայ ցանելը մեծ քանակով բերք ունենալու նախապայմաններէն մէկն է: Երբ հողը խորտուրտ է, կարելի չէ հաւասար բարձրութեամբ հնձել: Իսկ երբ ցորենի հասկերը հաւասար բարձրութեամբ չեն հնձուիլ, մեծ քանակութեամբ հացահատիկ կը փճանայ:

Երկրորդ կարեւոր գործօնը սերմացուի որակն էր. նախկին խորհրդային երկիրներուն տարածքին գործածուող սերմացուն մէկ կամ երկու ցողուն կու տար, իսկ ամերիկեան տեսակները՝ 7էն 8 ցողուն: Առաւել՝ ոռոսական իւրաքանչիւր ցողուն՝ 30 կամ 40 հացահատիկ կու տար, իսկ ամերիկեան ցողունը՝ 70 կամ 80 հատիկ:

Երրորդ, մէկ հեկտարի վրայ կարելի է 250 քիլոկրամ ոռոսական սերմ ցանել: Իսկ մենք միայն 130 քիլոկրամ ամերիկեան սերմ կը ցանենք: Երբ այս մօտեցումը կը բացատրենք գիւղացիներուն, թէ՛ քիչ ցանելով աւելի մեծ արդիւնք պիտի ստանան, դժուար կը համոզուին: Հետեւաբար առուուազ 2 կամ 3 տարի ժամանակ պէտք է, որպէսզի գիւղացին իր փորձով



ՋՐՈՐԻ ԲԱՅՈՒՍ (ՄԱՍԻՍԻ ԾՐԱՍԱ) Չախէն աջ՝ Վարուժան Տեր Սիմոնեան, «Էյ. Թի. Ճի.»ի գործակատար՝ Սեթ Խաչատրեան, Սիս գիւղի ոչ առևտրական կազմակերպութեան տնօրէն՝ Սիշա Լազիկեան:

«Արմինիըն Թեքնոլոճի Կրուփ»ը 10 տարուան ընթացքին աւելի քան 25 միլիոն տոլարի ներդրում կատարած է Հայաստանի եւ Արցախի մէջ: Ամերիկեան պետութիւնը Հայաստանի տրամադրած տարեկան իր օժանդակութեան վերաբերող պաշտօնական հրատարակութեան մէջ կը նշէ, թէ կազմակերպութիւնը կը նպաստէ Հայաստանի սեփական մարզին մէջ ցորենի սերմացուներու բազմապատկումին:

ՀԱՐՑՈՒՄ. - Ե՞րբ, ի՞նչ պէս եւ ի՞նչ մեկնակետով կազմուած է «Արմինիըն Թեքնոլոճի Կրուփ»ը: Ի՞նչ սկզբունքներու հիմամբ կը մշակէք ձեր ծրագիրները:

Պ.Տ.Ա.Ս.Ա.Ն. - «էյ. Թի. Ճի.»ն ոչ պաշտօնական կերպով կազմուած է 1989ին, մասամբ առաջին կամ երկրորդ սերունդի ամերիկահայերու կողմէ, որոնք գիւղատնտեսութեան եւ անասնաբուժութեան մասնագէտներ էին: Անոնց առջնահերթ նպատակը եղած է երկրաշարժէն ետք Հայաստանին օգնութիւն ցուցաբերել, նկատի ունենալով, որ Քալիֆորնիայի եւ մասնաւորաբար՝ Ֆրեզնոյի երկրագործութեան մարզին մէջ հայերը հսկայական ներդրում ունեցած են: Անոնք մտածած են. «Եթէ մենք յաջողեցանք Քալիֆորնիայի անասնաբուծները դրախտի վերածել, ապա կրնանք նաեւ մեր գիտելիքները փոխանցել Հայաստանին, որ տարածութեամբ աւելի փոքր է, թէկու՞ղ քարքարոտ»: Կազմակերպութիւնը



ԶԱՅ ԸՆԱՊԱՂՈՐ Տարբեր տեսակի ցորենով պատրաստուած հացեր. «Էյ. Թի. Ճի.»ի մշակները այս կազմակերպութեան երկրագործական ցուցմունքներու հետեւելով 1995ին արտադրած են սովորական քանակէն 54.5 միլիոն աւելի հաց: Յաւելեալ արտադրութեան շնորհիւ աւելի քան 298 հազար հոգի շաբաբը երեք հաց կ'ուտէ:


1992ին պաշտօնապէս արձանագրուեցաւ Քալիֆորնիայի նահանգին մէջ, «Արմինիըն Թեքնոլոճի Կրուփ» անունով: Անոր գլխաւոր մեկնակէտն էր գիւղատնտեսութեան մարզին մէջ Հայաստանը վերածել ինքնաբաւ երկրի՝ ստեղծելով ժողովուրդին եկամտու ապահովող աշխատավայրեր եւ գիւղատնտեսական զարգացումի պայմաններ: Այլ խօսքով, ոչ թէ կարծատեւ մարդասիրական օժանդակութիւն տրամադրել, այլ երկարատեւ ժամանակի վրայ նպաստել երկրին տնտեսական զարգացումին:

Հ. - Կրնա՞ք ներկայացնել Հայաստանի եւ Արցախի գիւղատնտեսութեան զարգացումին նպաստող ձեր գործունէութեան բնոյթը:

Պ. - Կազմակերպութեան կեդրոնը կը գտնուի Քալիֆորնիա: Ունինք երկու գրասենեակներ. մէկը Հայաստանի մէջ, իսկ միւսը՝ Արցախի: Աշխատանքին մեծ մասը անշուշտ կը կատարուի Հայաստանի եւ Արցախի տարբեր շրջաններուն մէջ, իսկ Քալիֆորնիայի գրասենեակը պատասխանատու է ընդհանուր քննական աշխատանքներու եւ վերահսկողութեան, ծրագրերը մշակելու եւ նիւթական աղբիւրներ գոյացնելու, ներդրումները մարդասիրական կամ տնտեսական միջոցներով Հայաստան եւ Արցախ փոխանցելու համար: Հայաստանի երկրաշարժէն ետք կազմակերպութեան ատենապետ տղաթ. Արթըր Հա-

ՅՐՈՐԻ ԲԱՅՈՒՍ (ՄԱՍԻՍԻ ԾՐԱՍԱ) Չախէն աջ՝ Վարուժան Տեր Սիմոնեան, «Էյ. Թի. Ճի.»ի գործակատար՝ Սեթ Խաչատրեան, Սիս գիւղի ոչ առևտրական կազմակերպութեան տնօրէն՝ Սիշա Լազիկեան:

«Արմինիըն Թեքնոլոճի Կրուփ»ը 10 տարուան ընթացքին աւելի քան 25 միլիոն տոլարի ներդրում կատարած է Հայաստանի եւ Արցախի մէջ: Ամերիկեան պետութիւնը Հայաստանի տրամադրած տարեկան իր օժանդակութեան վերաբերող պաշտօնական հրատարակութեան մէջ կը նշէ, թէ կազմակերպութիւնը կը նպաստէ Հայաստանի սեփական մարզին մէջ ցորենի սերմացուներու բազմապատկումին:



ՑՈՐԵՆԻ ԴԱՃՏԵՐ (ԱՐՄԱԿԻՐԻ ԾՐԱՍԱ) Մշակներ «Էյ. Թի. Ճի.»ի հետ գործակցելով 2000ի աշնան սերմացու հայթայթած են աւելի քան 12 հազար գիւղացիներու: Այսօր Հայաստանի մէջ մշակուած ցորենին աւելի քան 50 առ հարիւր համեմատութիւնը «Էյ. Թի. Ճի.»ի սերմացուներով է ցուցմունքներով աճած է:



Համոզուի: Մեր մօտեցումին առաւելութիւնը այն է, որ հողը չենք ծանրաբեռներ, նկատի ունենալով, որ ամերիկեան սերմացուներու բարձր որակը, ինչպէս նաեւ ամերիկեան ցանքի մօտեցումներն ու քերտիքները կը քանապատկեն բերքին քանակը:

Հ. - Գործակցութեան ինչպիսի՞նք համակարգ ստեղծած էք պետական կառույցներու եւ նոյնիքը հայ մշակին հետ:

Պ. - Սկիզբէն ի վեր կ'աշխատինք ուղղակի

Հայ գիւղացին հետ, որովհետեւ տարբեր մշակոյթներու եւ մտածելակերպերու հանդիպում մը տեղի կ'ունենայ: Հայաստանի ժողովուրդն է, որ կ'ապրի այնտեղ, եւ մենք պէտք է յարմարինք իրենց մտածելակերպին՝ առանց շեղելու մեր հիմնական նպատակէն եւ մօտեցումէն: Կը գործակցինք այն անձներուն հետ, որոնք պատրաստ են ընդառաջելու:

Ինչ կը վերաբերի պետական կառույցներուն, Հայաստանի մէջ հիւր ըլլալով՝ միշտ գիւղատնտեսութեան նախարարութիւնը տեղեակ պահած ենք մեր գործունէութեան մասին եւ վայելած ենք պետութեան հովանաւորութիւնը: Սկիզբէն մինչեւ այսօր լաւ յարաբերութիւններ ունեցած ենք Հայաստանի պետութեան հետ, թէ եւ միշտ պարտաւոր ենք կրկնել եւ բացատրել, թէ անձնական նպատակներ չենք հետապնդել, այլ կը ծառայենք Հայ ժողովուրդի բարօրութեան: Անշուշտ որոշ պատասխանատուներ երբեմն հակադրուած են մեզի, սակայն տարիներու ընթացքին յաղթահարած ենք դժուարութիւնները: Հայաստանի գիւղատնտեսութեան նախարար Դաւիթ Չատոյեան զօրավիզ կը կանգնի մեզի եւ տակաւին քանի մը օր առաջ յայտարարեց, թէ ինք անձամբ կը ցանկայ մեր աշխատանքին յաջողութիւնը:

Հ. - Կը գործակցի՞ք օտար մասնագէտներու, հիմնարկներու եւ կազմակերպութիւններու հետ:

Պ. - Այո՞, «էյ. Թի. Ճի.»ին հետ աշխատող բոլոր մասնագէտները ամերիկացի են, նկատի ունենալով, որ ցորենի եւ անասնակերի (ալֆալֆա) մասնագէտները մեծ մասամբ ոչ հայեր են: Շատ սերտ յարաբերութիւններ ունինք «Ինթերնէշնլ Սենթրալ Ֆոդ Ուիթ Էնտ Մէյք Իմփրովմենթ» միջազգային հիմնարկին հետ, որ կ'աշխատի տարբեր երկիրներու մէջ գտնել բարձրագոյն որակի սերմեր, եւ որուն նպատակն է աշխարհի տարածքին բազմացնել ցորենի բերքը: Երբ այս կազմակերպութեան ներկայացուցիչը Երեւան եկաւ, զարմացաւ, որ 1992ին ցորենի 30 տեսակներ կը փորձարկէինք քննադատներու վրայ, իսկ այժմ անոնց թիւը բարձրացած է 200ի: Թէ եւ այսօր բարձր որակի սերմացու ունինք, սակայն ասիկա չի նշանակեր, թէ պէտք է դադարինք աւելի լաւորակը փնտռելէ: Երկրորդ կազմակերպութիւնը, որուն հետ կը գործակցինք, ՄԱԿի «Ինթերնէշնլ Ֆաւորաբլ Կազմակերպութիւնն է»: Մեզի ամէնէն աւելի կ'օժանդակէ ամերիկեան պետութիւնը՝ միջազգային տնտեսութեան զարգացման եւ երկրագործութեան նախարարութիւններուն միջոցով: Իսկ Հայաստանի մէջ կապ հաստատած ենք Հողի Հիմնարկին, Երկրագործութեան Ակադեմիային եւ տարբեր մասնագէտներու հետ:

Ուրախալի երեւոյթ էր, որ երբ 1995ին Ամերիկայի կառավարութիւնը ուզեց որակական քննութեան անցընել «էյ. Թի. Ճի.»ի աշխատանքը, Հայաստան ուղարկեց առաջնակարգ երեք մասնագէտներ. Ուորըն Քրասթատ, Ռիչըրտ Նիւպրիլ եւ Ճէյմզ Տըլուշ, որոնք աշխարհի լաւագոյն մասնագէտներն էին գիւղատնտեսութեան մարզին եւ մասնաւորաբար ցորենի մշակումի զարգացման մէջ: Ուորըն

Հարցազրոյցը վարեց Լ. ԿԻՒՆՅԵԱՆ-ՄՐԱՊԵԱՆ

«Կ'ԱՇԽԱՏԻՆՔ, ՈՐ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ՀԱՅ ԻՐ...»

Շարունակում՝ 7րդ էջէն

Քրասնատ աշխարհի մէջ ամէնէն բարձրորակ սերմնացուն կատարելագործած է, իսկ Ռիչլորտ Նիւլբերգը Հնդկաստանի «Կանաչ Յեղափոխութեան» մասնագէտներէն է: (Հնդկաստանը այսօր ունի ցորենի ինքնարաւարտադրութիւն): Այս մասնագէտները Հայաստանի մէջ երբեք չաբաթ քննեցին մեր աշխատանքները, եւ անոնց ցուցմունքներուն հիմամբ մշակած ենք մեր ծրագիրները: Անոնք մեզի սորվեցուցին տեւաբար քննել մեր աշխատանքը եւ չտարուել երեւոյթներով կամ երազներով:

2.- Կազմակերպութիւնը ի՞նչպէս կ'ապահովէ իր նիւթերը աղբիւրները: Ամերիկայի պետութիւնը նիւթերը որեւէ օժանդակութիւն կը տրամադրէ «էյ. Թի. Ճի»-ին: Ի՞նչ աշխատանք կը տանիք ներդրումները բաշխելու համար: Ընդհանրապէս որո՞նք կ'ընդհանրեցնէ:

Պ.- Մեր նիւթական կարիքներուն մեծ մասը կ'ապահովեն Միացեալ Նահանգներու միջազգային տնտեսութեան գործազման եւ գիւղատնտեսութեան նախարարութիւնները, որոնք կ'օժանդակեն Հայաստանի մարդասիրական եւ տնտեսական ծրագիրներուն: Վերջին տարիներուն շուրջ 7.5 միլիոն տոյրի գումար ստացան մեր ամերիկեան կառուարութեանէն: Ամերիկայի Հայ գաղութը եւս կ'օժանդակէ՝ ընդհանրապէս:

Իր «էյ. Թի. Ճի»-ի տնօրէններու խորհուրդի կողմէ կատարուած դիմումներու: Հաստատութիւններ, ինչպէս «Լին-սի» հիմնարկը եւ «Կարապետեան Հիմնադրամ»ը տարեկան նուիրատուութիւններ կը կատարեն: Ինչ կը վերաբերի ներդրումներու, թէեւ միշտ փափաքած ենք կիրառելի գաղափարը, սակայն կը սպասէինք Հայաստանի եւ Արցախի մէջ նպատակահարմար աւելի տնտեսաւոր պայմաններու: 1998էն ի վեր Հայաստանի եւ Արցախի պետութիւնները խնդրեցին, որ առաջնութեամբ նաեւ այս ուղղութեամբ, որովհետեւ մարդասիրական օժանդակութեամբ չէ, որ երկիրը պիտի յառաջդիմէ, այլ տնտեսութեան զարգացումով: Թէեւ մեր բոլոր ծրագիրները զարգացման նպատակով ծրագրուած են, սակայն իրենց մէջ կ'ընդգրկեն մարդասիրական մօտեցում, որովհետեւ ժողովուրդը բաւարար եկամուտ չունի իր պարուստը հոգալու համար: Եթէ կարողանանք մեր ծրագիրները շահաբեր աղբիւր վերածել, այդ պարագային կրնանք ծնունդ տանք նաեւ այլ աշխատանքներու:

2.- Ցորենի ցանքէն տարբեր ցանքերու մասին կը մտածէք:

Պ.- Այո՛, օրինակ, մտադրած ենք հիմնել գինեւ ամերիկեան կառուարութեանէն: Ամերիկայի Հայ գաղութը եւս կ'օժանդակէ՝ ընդհանրապէս:

խանցիկ հիւանդութիւնները կանխարգելելու կամ անոնց ազդեցութիւնը մեղմացնելու կարելիութիւնները՝ գոհացուցելով ոչ միայն Հայաստանի, այլ նաեւ ամբողջ կովկասի կարիքները: Հաւանաբար յառաջիկայ տարի սկսինք այս ծրագիրին գործադրութեան: Գիտաշխատանքին անհրաժեշտ գործիքները արդէն ուղարկած ենք Հայաստան: Կը մնայ նիւթական աղբիւրները պահպանել զանոնք կազմելու եւ ամբողջացնելու համար:

Հայաստան ամսական առուուող մէկ միլիոն տոյր արժողութեամբ կախնեղէն կը ներածէ: Ասոր կարիքը չկայ: Եթէ ժողովուրդը բաւարար անասնակեր ունենայ, կրնայ արտադրել իր սեփական կաթն ու պանիրը եւ նոյնիսկ արտածել զանոնք: Այժմ արդէն կ'աճեցնենք առողջ (այլ-ֆալֆա) եւ այլ տեսակի անասնակերներ:

2.- Հայաստանի եւ Արցախի ցորենի պահանջը տեղական արտադրութեամբ գոհացնելու մեր ծրագիրը տարբեր մակարդակներու վրայ ի՞նչ առաւելութիւններ կ'ընձեռե՞ք հայ ժողովուրդին:

Պ.- Կ'աշխատենք, որ իւրաքանչիւր Հայ իր սեղանին վրայ ունենայ Հայ եւ կաթնեղէն: Երբ ժողովուրդը տնտեսապէս զօրաւոր է, երկիրը եւս զօրաւոր էր դառնայ եւ ոչ հակառակը: Ինչո՞ւ երկրին տնտեսութիւնը կախալ պահել արտաքին

պայմաններէն: Աւելի քան պիտի ըլլայ, որ Հայ գիւղացին ի՞նչ զօրանայ եւ ապահովէ իր կարիքները: Դրացի ժողովուրդներու միջեւ լարուածութիւնը կը մեղմանայ, երբ անոնք տնտեսապէս հանգիստ են: Մեր նպատակն է շրջանային խաղաղութեան նպաստել տնտեսական զարգացման միջոցով:

2.- Ցորենի ի՞նչ տարողութեամբ Հայաստանը մօտ է ցորենի ինքնաբար արտադրութիւն ունենալու: Ձեր կազմակերպութեամբ ի՞նչ համեմատութեամբ կրնայ արագացնել ընթացքը:

Պ.- Նախապէս Հայաստանի մէջ 1 հեկտար հողի վրայ առաւելագոյնը 2 մեթրական թոն քանակութեամբ ցորենի բերք կը հաւաքուէր: Այսօր նոյն տարածութեամբ շրջանի մը մէջ մինչեւ 8 մեթրական թոն քանակութեամբ ցորեն կը հաւաքուի մեր ծրագիրներու միջոցով եւ նուազ ծախսով: Այսինքն՝ 450 անգամ աւելի: 2 տարի առաջ, երբ Հայաստանը երաշտէ կը տառապէր, Հայաստանի պետութեամբ բազմաթիւ երկիրներու դիմած էր, որպէսզի սերմացու տրամադրէին: Հայաստանի մէջ ամերիկեան դեսպանատունը հրահրեց միջազգային ոչ առեւտրական կազմակերպութիւններ, որոնք շարունակեցին մեր փոքրիկ կազմակերպութիւնը, որպէսզի օգնութեան միջոցներու մասին մտածենք: Ոչ ոք պատասխան մը ունէր: Իսկ

մենք յայտարարեցինք, թէ Հայաստանի մէջ ամերիկեան ցորեն ցանող մեր մշակները կրնան սերմացու տալ: 40 օրուան ընթացքին 12074 ընտանիքներ սերմացու տրամադրեցինք աշխանացանի համար: Ասիկա այն ցորենն էր, որ Հայ գիւղացին իր բոստիցով կը մշակէր եւ կը բազմացնէր իր հողին վրայ:

Եթէ մեր ծրագիրը իր լրուածին հասնի, ապա Հայաստանի պետութիւնը պիտի կարենայ տարեկան առուուող 12 միլիոն տոյր ինքնադրուութիւն կատարել: Այսօր Հայաստանի մէջ մշակուած ցորենին աւելի քան 50 առ հարիւր համեմատութիւնը «էյ. Թի. Ճի»-ի սերմացուներով եւ ցուցմունքներով աճած է: Բազմաթիւ գիւղացիներ կը վստահին մեր աշխատեալածեւին եւ ամերիկեան ցորեն կը փնտոեն ցանելու համար, որովհետեւ արդէնքը խրախուսիչ է: Արդեօք պիտի կարենանք հասնիլ մեր մեկնակէտին եւ 100 առ հարիւր համեմատութեամբ բաւարարել երկրին ցորենի պահանջը: Պայման չէ: Եթէ 80 առ հարիւր համեմատութեամբ ինքնաբաւ դարձնենք ժողովուրդը, արդէն մեծ իրագործում մըն է: Կը կարծեմ, որ 2 կամ 3 տարին կրնանք հասնիլ այս արդիւնքին: Անշուշտ ասիկա լուսատես մօտեցում մըն է՝ առանց հաշիւի առնելու տնտեսական, կլիմայական եւ բնութեան անախատեսելի փոփոխութիւնները:

ԼՈՒՏՈՆԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՍԱԿԱՐԱՆ

Լոնտոնի սակարանից մէջ, դրամահիշներու փոխանակման սակը հետեւեալն էր երեկ կէսօրին.

Ամերիկեան տոյրի փոխանակման սակերը	0.9447
Եվրո	7.4287
Ֆրանսական ֆրանք	1.5321
Քանադական տոյր	2.215
Գերմանական մարք	2.4957
Նիւզլանդական ֆլորէնց	1.5598
Ջոնիցերիական ֆրանք	45.685
Պելիցիական ֆրանք	2192.83
Իտալական լիր	124.34
Ճափոնական ԵՏԵ	9.678
Մեքսիկական քուրոն	7.8429
Նորվեգիական քուրոն	7.8659
Իսրայէլական քուրոն	1.4585

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԼՈՒՍԻՆ ԱՊՏԱԼԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 9 Յունիս 2002, Նոր Մարտի Սրբոց Զատասից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԼՈՒՍԻՆ ԾԻՐԱԼԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 9 Յունիս 2002, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԳՐԻԳՈՐ ԳՈՃԱՅԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 9 Յունիս 2002, Նոր Միսի Ս. Ասրգիս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՏՈԶԹ. ԺԱԳ-ՆՈՒՊԱՐ ՊԱԳԱԼԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 9 Յունիս 2002, Էշրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՏՈԶԹ. ՄԵՐՈՒԹԱՆ ՊԱՂՁԵՃԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 9 Յունիս 2002, Էշրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5163

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

ՇՈՒԴՈՒՄԱԿԱՆ	ՈՒՂԱՄԱՅԵՍ
1. Սկսնակ - Գլանիկ:	1. Ցանդուզն - Աղբիւր (Հակ.):
2. Գ. դարու հերետիկոս - Մէկ հատիկ:	2. Զինկախառն պղինձ - Ափրիկեան երկիր:
3. Արեւմտեան Հայաստանի քաղաքներէն - Գործադուր:	3. Մէկալ - Շամանդաղ - Ցուցական ածական:
4. Դիւանաբար - Տարածքի միաւոր:	4. Գնչու - Բուրումնաւան տերեւներով բոյս:
5. Նոյն գիրքը - Ծարիւր:	5. Խաղաթուղթի մէկնոց - Շանխտո, բուսական բոյս:
6. Տասն բաղկացած:	6. Զօրք - Կուռնկ:
7. Պարտքով - Նափուլէն Ա.ի աքսորավայրերէն:	7. Գիտական համայնակից տառեր - Ածականները - Կողմ:
8. Պողոտեան - Չայնակից տառեր - Ածականները - Կողմ:	8. Մնուկ - Իգական օտար անուն - Նոյն գիրքը:
9. Շուրջ - Կենդանական սեռ:	9. Եղծանել - Թերթի երես:
10. Ներքինի - Քրիստոնէական Զանից Ամառնային Կերտն:	10. Արական օտար անուն - Գալիք:
11. Հալիի յաղորդը - Կողմնակի ծակ - Այրուրենէն:	11. Դիտող, նայող - Արական օտար անուն:

ԹԻՒ 5162

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԹՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Մ	Ս	Գ	Գ	Մ	Օ	Տ	Ս	Ս
2	Օ	Ր	Ս	Ս	Գ	Ս	Տ	Ս	
3	Ր	Ե	Տ	Ի	Կ	Ա	Ս	Կ	
4	Ո	Ս	Ի	Կ	Ա	Ս	Լ	Ա	
5	Ի	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	
6	Ի	Ս	Բ	Ա	Ի	Ա	Գ		
7	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Տ	
8	Ս	Ս	Ս	Ի	Կ	Ճ	Ե		
9	Ս	Ս	Ի	Ի	Ի	Կ			
10	Ա	Բ	Ս	Ե	Ր	Ա	Ս		

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

☆ **ԽՈՑ** (21 Մարտին 20 Ապրիլ)

Հսկեցէք մեր քակից, որովհետեւ այս օրերուն շատ փափաք ունիք առատ ծախսելու: Ամիսը նոր սկսած է, հետեւաբար պիտե՛ի տագնապ կրնաք ունենալ:

☆ **ՅՈՒԼ** (21 Ապրիլէն 21 Մայիս)

Ձեր հարազատները մեզ կը շփացնեն, որպէսզի զգուշ ըլլաք, անոնք մեզ կ'ողողեն քնքուշ խօսքերով: Այսօր պզտիկ ամպ մը պիտի անցնի մեր վրայէն:

☆ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 23 Յունիս)

Թեթեւ յոգնութիւն մը մեզ պիտի մղէ հանգիստ մնալու, որովհետեւ այսօր մեր տրամադրութիւնը շատ խանդավառ չէ, ուրեմն հանգստացէք:

☆ **ԽԵՅԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս)

Բարեկամ մը կամ բարեկամուհի մը պետք պիտի ունենայ մեր օգնութեան, որովհետեւ ան ներշնչութեան մէջ է: Պատրաստ եղէք անոր խնդրանքին պատասխանելու:

☆ **ԱՌԻԻՄ** (24 Յունիսէն 23 Օգոստոս)

Շատ ուշադիր եղէք գործի մէջ, որպէսզի սխալ մը չգործէք եւ ներք մը չբացուի մեր աշխատանքի ընթացքին մէջ: Եղէք շատ ուշադիր:

☆ **ԿՈՅՍ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)

Ձեր մտածումներուն մէջ շատ հետաւորներ մի՛ երթաք եւ մի՛ շղայնանաք: Ձեր կարելի ըրէք օրուան հարցերը արդար լուծումի առաջնորդելու:

☆ **ԿՇԻՒՔ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)

Ամսուան այս առաջին շաբաթը եւ քանի մը օր եւս պիտի ունենաք նիւթական դժուարութիւն: Շատ մի՛ մտահոգուիք, որովհետեւ այս տագնապը շուտով պիտի անցնի:

☆ **ԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)

Շատ ընեւթներ ունիք, հետեւաբար պետք է ըլլաք աշխատող եւ մանաւանդ պետք է ըլլաք դիւանագետ, որպէսզի մեր բոլոր արտադրութիւններէն ոչ ոք վշտանայ:

☆ **ԱՆԵՂՆԱԻՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)

Աշխատանքի մարզը պիտի ըլլայ եռուն: Պիտի ընդառաջէք մեզի ուղղուած հրակերներուն: Բոլորին դիմաց եղէք ծպտուց եւ եռանդուն:

☆ **ԱՅԾԵՂԻՒՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)

Մտահոգ էք անձի մը գործունեութեամբ եւ անոր օգնել կ'ուզէք: Բայց ան մեզ յուսախար պիտի ընէ: Ուրեմն քիչ մը եւս համբերեցէք եւ անոր դիմաց դժգոհութիւն մի՛ արտայայտէք:

☆ **ԾՈՎԱՆՈՅԸ** (21 Յունուարէն 19 Փետրուար)

Ձեր ընտանիքին երկու կողմերուն նկատմամբ ունիք անկեղծ սէր: Հիմա անոնք իրարու հետ կը վիճին, եւ դուք շուտաւ էք, թէ որ մէկուն կողմէն կից պիտի ըլլաք. այս պարագան բացատրեցէք անոնց:

☆ **ՉՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)

Եթէ հարցազրոյց մը, տեսակցութիւն մը կատարած էք, կամ՝ քննութիւն մը անցուցած, ու կը սպասէք պատասխանի, այսօր պիտի ստանաք մեր պատասխանը:

ՕՐԱՏԵՏՐ

Panasonic

ՇԵՆԱՏԵՍԻԼ

10. Է. Լ. 10:00.- Սապաօ 13:00.- Մարտի հանա

14:00.- Եւրոպիոյ 14:30.- Լուրեր 15:00.- Արաք. ֆիլմաշար 17:00.- Պէտք սէլըր 18:00.- Շրջի հոյով 18:30.- Արաքական ֆիլմաշար

19:30.- Արաք. յուրեր 21:00.- Միջիս 22:00.- Ամերիկեան ծապ 23:00.- Սի չէյնս

ԷՄ. Թ. Վ. 7:30.- Թելէ մաքէր 9:30.- Միսի սրիտիօ

10:30.- Քի է քի 11:00.- Ուս քննա 11:30.- Քրի չէյնս 12:00.- Է. Թ. Վ. սիրտթ 12:30.- Է. Է. Շի. 13:00.- Մարիա Սելեսթ 14:00.- Փոքրիկ Ֆրանս 2 14:30.- Սի. Է. Ս. ի յուրեր 15:15.- Սիսի արհիւ 16:30.- Փոքրիկ 17:00.- Միսի սրիտիօ 17:45.- @Է. Թ. Վ. 19:00.- Էստրոնա 20:00.- Արաքերէն յուրեր 20:30.- Ռահիթ 21:30.- Թահիթ 22:30.- Է. Պ. Է. Էշրին 23:45.- Տիվերթիսըման

13:00.- Յիշ ինֆօ 13:05.- Նոր յիշտիկ 14:00.- Անգլերէնով յուրեր 14:20.- Յրաններէնով յուրեր 14:40.- Հայերէնով յուրեր 15:30.- Արաք. ֆիլմաշար 16:30.- Թելէք սիլ 17:00.- Ըզար բոպար 17:30.- Արաքական ֆիլմաշար

18:30.- Միւլիքան 19:30.- Մոնտիալի յատուկ յայտագիր 20:00.- Արաքերէն յուրեր 20:30.- Ռուսով Մութահարիւր 20:32.- Ման սաւարպահ մէլիոն 21:30.- Ամերիկեան ֆիլմաշար

ԷՆ. Պ. Է. 15:00.- Լուրեր 16:00.- Միսի ու ֆիւս

17:00.- Վաւերագրական 17:30.- Սիսի 13:30.- Տեղական ֆիլմաշար 14:00.- Լուրեր 15:00.- Վաւերագրական 17:00.- Հիւրապ Միս 18:00.- Մարիա Նուր 19:30.- Լուրեր 20:30.- Մէնթ քորֆէ 21:30.- Մարական յայտագիր 22:00.- Մասալիս 23:00.- Թահիթ 23:30.- Մոնտիալի յատուկ յայտագիր

ՆՈՒ Թ. Վ. 7:30.- Լուրեր 8:30.- Եոկա

09:00.- Սապահ էլ յարտ 12:30.- Սիսի 13:30.- Տեղական ֆիլմաշար 14:00.- Լուրեր 15:00.- Վաւերագրական 17:00.- Հիւրապ Միս 18:00.- Մարիա Նուր 19:30.- Լուրեր 20:30.- Մէնթ քորֆէ 21:30.- Մարական յայտագիր 22:00.- Մասալիս 23:00.- Թահիթ 23:30.- Մոնտիալի յատուկ յայտագիր

ՆՈՒ Թ. Վ. 7:00.- Սի. Է. 7:30.- Սի. Է. 8:00.- Սի. Է. 8:30.- Սի. Է. 9:00.- Սի. Է. 9:30.- Սի. Է. 10:00.- Սի. Է. 10:30.- Սի. Է. 11:00.- Սի. Է. 11:30.- Սի. Է. 12:00.- Սի. Է. 12:30.- Սի. Է. 13:00.- Սի. Է. 13:30.- Սի. Է. 14:00.- Սի. Է. 14:30.- Սի. Է. 15:00.- Սի. Է. 15:30.- Սի. Է. 16:00.- Սի. Է. 16:30.- Սի. Է. 17:00.- Սի. Է. 17:30.- Սի. Է. 18:00.- Սի. Է. 18:30.- Սի. Է. 19:00.- Սի. Է. 19:30.- Սի. Է. 20:00.- Սի. Է. 20:30.- Սի. Է. 21:00.- Սի. Է. 21:30.- Սի. Է. 22:00.- Սի. Է. 22:30.- Սի. Է. 23:00.- Սի. Է. 23:30.- Սի. Է. 24:00.- Սի

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ

ՄՈՆՏԻՍՄԱՆ 2002

- ՍԵՆՏՏԱԿԱՆ ԱՐԱՔԻԱ ԴՈՒՐՍ ՄՆԱՑ ՄՐՑԱՇԱՐՔԷՆ - ԱՅՍՕՐ՝ ԱՐԺԱՆԹԻՆ - ԱՆԳԼԻԱ



Ճափոնի եւ Հարաւային Գորտալի մէջ տեղի ունեցող 2002ի Մոնտիսմանի 7րդ օրուան երէկուան մրցումներուն առաջինին, Սենեկալ 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց Դանիոյ հետ, Թաէկուի մէջ (Հարաւային Գորտալ) տեղի ունեցած մրցումին, որուն ներկայ էր աւելի քան 43 հազար համալիր: Ա. կիսախաղին, Դանիա 1-0 արդիւնքով յաղթանակ տար Սալիֆ Տիաո (16րդ):

Փենալթիին պատճառ դարձած սենեկալցի միջինապահ Սալիֆ Տիաո, Բ. կիսախաղին սրբաբոց իր սխալը, երբ նշանակեց իր կազմին հաւասարութեան կողմ (52րդ):

Մրցումին աւարտէն տասը վայրկեան առաջ Տիաո դարձեալ իր վրայ կեդրոնացուց լուսարձակները, երբ այս անգամ կարմիր քարտ ստանալով դաշտէն վտարուեցաւ:

Դանիոյ հետ իր արձանագրած այս հաւասարութենէն ետք, Սենեկալ փաստեց, որ պատահականօրէն չէր, որ յաղթած էր աշխարհի ախոյան Ֆրանսայի:

Այդ մէկը հաստատեց Դանիոյ մարզիչ Մորթեն Օլսըն, որ իր կազմին արձանագրած այս հաւասարութենէն ետք, ըսաւ, որ բախտաւոր դուրս եկած էր, որ յաջողած էր կէտով մը բաժնուիլ Սենեկալին:

Անոնք երկուքը այժմ ունին ձախակ 11 Յունիսիայի Դանիա իր ունեցած կողմնակից շնորհիւ կը գերազանցէ Սենեկալը: Ա. խմբակէն ներս տեղի ունեցած երկրորդ ճակատումին, բաժակակիր Ֆրանսա ձախողեցաւ պարտութեան մատնել Ուրուկուէյը, որ իրեն նման իր կատարած առաջին մրցումին պարտութիւն մը կրած էր: Մրցու-

մը, որ վերջ գտաւ 0-0 արդիւնքով, եղաւ մրցաշարին առաջին ճակատումը, որ աւարտեցաւ 0-0 արդիւնքով: Մրցումը տեղի ունեցաւ Փոլսանի մէջ (Հարաւային Գորտալ), 38 հազար համալիրներու ներկայութեան:

Ֆրանսա, որ Մոնտիսմանի բացման մրցումին 1-0 արդիւնքով անակնկալ պարտութիւն մը կրած էր Սենեկալէն, 25րդ վայրկեանին կորսնցուց իր կարգի մէկ մարզիկը Թիեռի Զանրին, որ քիչ մը կոշտ իր խաղարկութեան պատճառով, մեքսիկացի իրաւարար Ֆելիքս Ռամոս Ռիգոյի կողմէ կարմիր քարտ մը ստացաւ: Իր կատարելիք վերջին



Թիեռի Զանրի (ձախից) Մարսելո Ռոմերոյի դէմ իր կատարած ֆաուլին պահուց:

մրցումին Դանիոյ դէմ (յառաջիկայ 11 Յունիսիային), Ֆրանսա յաղթանակէ այլընտրանք չունի եւ այդ մէկը՝ առնուազան երկու կողմ տարբերութեամբ, այսպէս, անիկա պիտի դառնայ առաջին տիտղոսակիր խումբը, որ Ա. հանգրուանէն դուրս կը մնայ մրցաշարէն: 1962ի Մոնտիսմանի հաճախող Պարիսի, 1966ի Մոնտիսմանի չէր յաջողած հասնիլ Բ. հանգրուան: Հակառակ անոր որ մրցումին աւելի քան մէկ ժամը Ֆրանսա տասը մարզիկով պայքարեցաւ, սակայն ձախողեցաւ կողմնակից յաջողութեամբ:



Սամուէլ Էթու, որ կը ճշգնակէ Քամերունի կողմէ

երկրորդ մրցումն ըլլաւ: Հակառակ Ֆրանսայի կողմէ ստեղծուած առիթներուն, որոնցմէ մէկը զսպուեցաւ անոր բերդին սիւնին կողմէ, բան՝ Քամերունի: Մրցումին ներկայ էր աւելի քան 52 հազար համալիր:

Իր կրած այս պարտութենէն ետք, այսպիսով Սէնտալան Արաբիա հանդիսացաւ առաջին խումբը, որ դուրս մնաց Մոնտիսմանի, կրելէ ետք իր երկրորդ պարտութիւնը: Նոյնիսկ եթէ անիկա վերջին մրցումին յաջողի պարտութեան մատնել Այիբը, պիտի չկարենայ դերազանցել Գերմանիան եւ Քամերունը, որոնք ունին ձախակ կէտ: Մրցումին «որ» կողմը նշանակեց Սամուէլ Էթու (65րդ): Սէնտալան Արաբիոյ կազմէն կը բացակայէր յառաջապահ Սամի Ժապէր (վիրաւոր):

Իր կազմին կատարած առաջին մրցումին մասին անդրադառնալով՝ Սէնտալան Արաբիոյ մարզիչ Նասիբ Ժոնար յայտնեց, թէ իր կազմը շատ աւելի լաւ մրցում մը կատարեց՝ մոռնալով Գերմանիայէն 8-0 արդիւնքով իր կրած ծանր պարտութիւնը:

ԱՅՍՕՐՈՒՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Մոնտիսմանի 8րդ օրուան՝ այսօրուան յայտնագիրին վրայ են դարձեալ երեք մրցումներ, որոնց առաջինը կը սկսի առաւօտեան ժամը 9:30ին (Պէյրութի ժամով):

Երեք մրցումներէն վերջինը, որ իրարու դէմ պիտի հանէ Արժանթինը եւ Անգլիան, անկասկած, որ պիտի ըլլայ 2002ի Մոնտիսմանի ցարդ ամենէն աւելի յատկանշական մրցումը:

Սափորոյի մէջ (Ճափոն) տեղի ունենալիք այս մրցումը (ժամը 14:30ին) անոնց միջեւ պիտի ըլլայ 13րդ հանդիպումը: Զորս մրցում վերջ գտած է հաւասարութեամբ, Անգլիա յաղթանակ արձանագրած է չորս անգամ, իսկ Արժանթին՝ երեք անգամ, մինչ 12րդ հանդիպումը մնացած է կիսատ՝ զօրաւոր անձրեւուն պատճառով:

2 անգամ աշխարհի ախոյան հանդիսացած Արժանթին, 13րդ անգամ ըլլալով կը մասնակցի Մոնտիսմանի, իսկ մէկ անգամ աշխարհի ախոյան հանդիսացած Անգլիան՝ 11րդ անգամ ըլլալով:

Եթէ պատահի, որ Տիեռի Սիմոնի դաշտ ներկայանան այս մրցումին, պիտի ըլլան այն միակ մարզիկները, որոնք Արժանթին - Անգլիա չորրորդ հանդիպումին ներկայ պիտի գտնուին:

Օրուան իրաւարարն է իտալացի Փիեթրուի Գոլիսա, իսկ կողմի իրաւարարները՝ Հեթթոր Վերկարա (Քանադա) եւ Մոնտիսմանի Մարտին: Այսօրուան առաջին մրցումը տեղի պիտի ունենայ 9:30ին Գորտալի մէջ (Ճափոն), որուն ընթացքին Շուէտ պիտի ճակատի Նիկերիոյ դէմ: Նախապէս, անոնք միայն մէկ անգամ իրարու դէմ յանդիպած են, երբ Շուէտ 1-0 արդիւնքով պարտութեան մատնած է Նիկերիոյ (բարեկամական մրցում): Նիկերիա յաջողութեամբ երրորդ անգամ ըլլալով կը մասնակցի Շուէտի 10րդ անգամ ըլլալով:

Օրուան իրաւարարն է Ռոնէ Օրթիլպէ (Պոլիվիա), իսկ կողմի իրաւարարները՝ Միկէլ Ժիաքոմուզի (Փարակուէյ) եւ Մաթ Լազիմ Աուանկ Հաւաթ (Մալեզիա):

Վերջապէս, երրորդ մրցումը տեղի կ'ունենայ կէսօրուան ժամը 12:00ին, Շոնկոուի մէջ (Հարաւային Գորտալ), ուր Սպանիա եւ Փարակուէյ կը ճակատին իրարու դէմ: Փարակուէյի բերդապահ Նուսէ Լուիս Զիլաւէրթ, որ ազգային խումբին հետ նշանակած է ութ միջազգային կողմ, մրցումին նախաօրէն կ'ըզէ, թէ ամէն գնով որոշած է այս մրցումին անպայման կողմը նշանակել: Ան կախակալած ըլլալով բացակայած էր Հարաւային Աֆրիկէի դէմ ունեցած մրցումին (2-2):

Նախապէս երկու կազմերը իրարու դէմ յանդիման եկած են միայն մէկ անգամ, այդ ալ 1998ի Մոնտիսմանի եւ 0-0 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրած

իրարու հետ: Սպանիա 11րդ անգամ ըլլալով կը մասնակցի



Սալիֆ Տիաո, որ եղաւ Տալ թմամարտի դէմ ֆաուլ մը կը կատարէ, պատճառ դառնալով փենալթիին, ապա...



... ան կը ճշգնակէ Սենեկալի հաւասարութեան կողմ

Մոնտիսմանի, իսկ Փարակուէյ Յրդ անգամ ըլլալով:

Օրուան իրաւարարն է Զիլաւէրթ (Ֆրակուէյ) եւ Պրայ-բիպատացի Ժամալ Դանպալուէ:

Ստորեւ՝ այսօրուան եւ վաղուան մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէյրութի ժամով):

ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Մրցումները տեղի պիտի ունենան հետևյալ կերպով:

Մրցում	Ժամ
Շուէտ - Նիկերիա	9:30ին
Սպանիա - Փարակուէյ	12:00ին
Արժանթին - Անգլիա	14:30ին
Հար. Աֆրիկէ - Սլովենիա	9:30ին
Իտալիա - Խրուաթիա	12:00ին
Պրայիլ - Չինաստան	14:30ին

ՌԻՐԱԾՆԵՐԸ ԳՐԱՐՈՒՄ

ՌԻՐԱԾՆԵՐԸ ԳՐԱՐՈՒՄ

Փարիպի մէջ (Ֆրանսա) Ռույան Կարուսի թեւախաղի մրցաշարին կիսաաւարտական հանգրուանի մրցումներուն, Ուիլիսմա քոլորէր (Մ. Ս.)՝ Վիլիսմա եւ Սերենա յաղթանակներ արձանագրելով, ապահովեցին աւարտական հանգրուանին իրենց տոմսերը: Առաջինը պարտութեան մատնեց Քլարիսա Ֆերնանտէսը (Արժանթին), իսկ երկրորդը՝ թիւ 1 դասուած Ճենիֆեր Քալիքիսիան (Մ. Ս.):

Տղոց քառորդ աւարտականի մրցումներուն, Սեպուրիան Կրոման (Ֆրանսա), Անտոնի Ակապի (Մ. Ս.) եւ Անտոնի Փաւել (Ռուսաստան), յաջողութեամբ պարտութիւններ կրելէ ետք Մարաթ Սաֆինէն (Ռուսիա), Խուան Քարլոս Ֆերնանտէս (Սպանիա) եւ Ալեքս Քորթիսայէն (Սպանիա), դուրս մնացին մրցաշարէն:

«ԱԶԳԱԿ»Ի ՄՈՆՏԻՍՄԱՆ ԲԱՅԱՌԻԿ ՄՐՑԱՆՔ

- 1- Ո՞վ պիտի ըլլայ Ուրբաթ, 7 Յունիսին Սափորոյի մէջ (Ճափոն) 2. խմբակէն ներս կայանալիք Արժանթին - Անգլիա մրցումին յաղթականը:
- 2- Ի՞նչ պիտի ըլլայ մրցումին արդիւնքը: (15 նիշ)
- 3- Որո՞նք պիտի նշանակեն կողմը: (25 նիշ):

Անուն.....
Մականուն.....
Հեռաձայն.....
Սոյն մրցանքին կտրօնները «Ազգակ»ի խմբագրատուն պէտք է հասած ըլլան առաւելագոյնը՝ մինչեւ Ուրբաթ, 7 Յունիսի կէտը:
Առաւելագոյն նիշ ապահովող մասնակիցը կ'ըլլայ յաղթականը: Հաւասար նիշերու պարագային, տեղի կ'ունենայ վիճակազուրկում:
Սոյն մրցանքին չեն կրնար մասնակցիլ «Ազգակ»ի պաշտօնէանները:
Յաղթականը կը շահի «Աւօ Սիւլահեան» հաստատութեան կողմէ տրամադրուած IGLOO վաճառանիշով դաշտագնացութեան ստանդարտ մը:

